



ՀՐՋԱԿԱՆ ՄԻԶԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**«ԱՐԳԵԼՈՅԱՊԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի
ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ
ԿՈՂՄԻՑ 2025
ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



(010) 688204

reserveparksnco@env.am

**«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ում
2025թ-ի 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

- ✓ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի/այսուհետ Կազմակերպություն/ Ենթակայության տակ գտնվող «Զրվեժ» անտառպարկում գիտաշխատողների կողմից իրականացվել են Էկոկրթական շրջայցեր՝ «Միտիար Սեբաստացի» կրթական համալիրի, «Այր», Երևանի թիվ 187 միջն., 87, 134, Նոր Նորքի 143, 66, 51, 181, 155, Ն. Աղբայանի անվան և Նոր Խարբերդի թիվ 2 միջն. դպրոցների, Եջմիածնի Էօրնեական հանրակրթական դպրոցի, ք. Արովյանի թիվ 3-րդ և Երևանի թիվ 110 մանկապարտեզների, «Իմ ույի» ուսումնական կենտրոնի, «Հակոբ Կոջոյան», «Բյուրական», «ՄԱՎ» և Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական կրթահամալիրների, «Ազատ Միտք» ուսումնական կենտրոնի, «Քիղնես» զարգացման կենտրոնի, «Էկոկրթարան»-ի, «Արմթրեյլս» և «Ուան ուեյ» տուրիստական կազմակերպությունների, «Լեռնամանիա» արշավական ակումբի թվով 1322 սաների և այցելուների հետ:
- ✓ Կազմակերպության Ենթակայության տակ գտնվող «Զրվեժ» անտառպարկում ունեցել ենք թվով 19289, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում ունեցել ենք՝ թվով 44103, Բերդի «Սորաններ» դենդրոպարկում ունեցել ենք թվով՝ 343 և «Զիկատար» պետական արգելավայրում թվով 68 այցելուներ:
- ✓ «Զրվեժ» անտառպարկում անցկացվել են ծմեռային խաղեր՝ «Ծվաք» ազգային մարտարվեստի, Հայաստանի դահուկային լեռնագնացների ֆեղերացիայի և «Հայ Ասպետ» ԿԲՀ-ի սաների կողմից:
- ✓ Սոցիալական ցանցերի միջոցով կատարվել է իրազեկումներ Կազմակերպության Ենթակայության տակ գտնվող տարածքներում ամենօրյա կատարված աշխատանքների և միջոցառումների վերաբերյալ:
- ✓ Կազմակերպություն են այցելել Ծվեղիայի Լունդի համալսարանի «Բնահեն լուծումներ քաղաքային միջավայրի համար» ծրագրի մասնակիցները: Մասնակիցների հետ ըննարկվել է «Զրվեժ» անտառպարկի զարգացման

ուղիները: Հանդիպումն ավարտվել է անտառապարկում շրջայցով, որը նաև ներկայացվել է համալսարանում մասնակիցների կողմից:

- ✓ Կազմակերպության և Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որը հնարավորություն կտա կազմակերպել բնապահպանական և էկոկրթական թեմաներով՝ էկոկրթական, էկոճանաչողական և էկոդաստիարակչական միջոցառումներ և դասընթացներ: Համագործակցության հուշագրի միջոցով իրականացվելու են բնապահպանական թեմաներով ցուցահանդեսներ, համերգային ծրագրեր, ֆուտոնկարահանումներ և մշակութային միջոցառումներ և այլ ծրագրեր, ինչպես նաև Կազմակերպության հիմնարկներում քոլեջի սաները անցկացնելու են իրենց արտադրական պրակտիկաները:
- ✓ Ս/թ Մարտի 21-ին, անտառների միջազգային օրվա առթիվ շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համայնք» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է միջոցառում-մրցույթ «ԷԿՈ-ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ» թեմայով: Միջոցառում-մրցույթին մասնակցել են Հայաստանի ազգային ագրարային Ա.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Հայաստանի մանկավարժական համալսարանի և Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողները: Միջոցառմանը ներկա էր նաև շրջակա միջավայրի նախարարության կենսաբազմազանության և քաղաքականության վարչության բաժնի աշխատակիցը, ով ցուցաբերեց իր մասնագիտական աջակցությունը: Միջոցառում-մրցույթի շրջանակում մասնակիցները ներկայացրել են իրենց կողմից պատրաստված տեսանյութերը՝ Կազմակերպության առաջադրված թեմաների վերաբերյալ: Բոլոր մասնակիցները խրախուսվեցին շնորհակալագրերով, սակայն առավել ակտիվ մասնակիցները արժանացան անհատական նվերների: Օրվա խորհուրդը ամրապնելու նպատակով մասնակիցները ծառատունկ իրականացրեցին «Ձրվեժ» անտառպարկում: Միջոցառմանը ամփոփվեց «ՎՈՒԴՈ» կենտրոնի կողմից ցուցադրված թեմատիկ կինոդիտմամբ: Միջոցառմանը մասնակցում էին թվով 25 մասնակիցներ:

- ✓ Կազմակերպության Ենթակայությամբ գործող «Զրվեժ» անտառապարկում իրենց արտադրական պրակտիկան են անցկացրել Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի, թվով 15 ուսանողներ: Պրակտիկան անցկացրել են Կազմակերպության գիտության և Էկոտուրիզմի բաժանմունքի աշխատակիցները, ծանոթացնելով անտառապարկի կենսաբազմազանությանը, վայրի բույսերին և ներմուծված տեսակային կազմին:
- ✓ Կազմակերպության Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում ոլորտի մասնագետների մասնակցությամբ անցկացվել է քննարկում՝ նվիրված Էկոտուրիզմի զարգացման նախադրյալների, հնարավորությունների և առկա ռեսուրսների վերլուծությանը: Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել զրոսաշրջության խթանման հեռանկարներին՝ շեշտադրմամբ քննության առանձնահատկությունների պահպանման և համատեղ նախաձեռնությունների իրականացման վրա:
- ✓ Կազմակերպության աշխատակիցները Բերդի «Սորաններ» դենդրոպարկում իրականացրել են համատեղ շաբաթօրյակ: Շաբաթօրյակի շրջանակում իրականացվել են տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներ: Աշխատակիցները մասնակցել են նաև զրոսաշրջային արահետի ստեղծման գործին, որն անցնում է պատմամշակութային մեծ արժեք ունեցող հուշարձանների և խաչքարերի կողմով: Նոր արահետը նպատակ ունի խթանել Էկոտուրիզմի զարգացումը տարածաշրջանում՝ զուգահեռ կերպով բարձրացնելով տեղական մշակութային ժառանգության ճանաչելիությունը: Միջոցառում-շաբաթօրյակին մասնակցել են 15 մարդ:
- ✓ Կազմակերպության Ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի ուսանողները մասնակցել են դենդրոպարկի որոշ հատվածների մաքրման և խնամքի աշխատանքներին: Այս նախաձեռնության նպատակն էր խթանել երիտասարդների մասնակցությունը բնապահպանական գործընթացներին, միևնույն ժամանակ նպաստելով տարածքի բարեկարգմանը և այցելուների համար ավելի բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

- ✓ Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ձրվեժ» անտառապարկում կայացել է հետաքրքիր և խորհրդանշական միջոցառում: «Սմարթ Ստուդիո» ուսումնարան կենտրոնի վեց տարեկան սաները մասնակցել են ծառատնկման աշխատանքների՝ իրենց փոքրիկ ձեռքերով անտառին հաղորդելով նոր շունչ:
- ✓ Ա/թ. մայիսի 18-ին «Սոճուտ» դենդրոպարկում անցկացվեց հուզիչ և խորհրդանշական ծառատունկ՝ նվիրված Վիտալի Լեռնովիչի հիշատակին: Այդ օրը լրանում էր նրա 88-ամյակը: Նրա ծննդյան օրը նշանավորվեց որպես հիշողության, երախտագիտության և շարունակության խորհրդանշի՝ նոր հիմնվող տնկարանում տնկվեցին 88 մայրի ծառեր, որոնք խորհրդանշում են նրա անցած 88 տարիները: Ծառատունկին ներկա էր Վիտալի Լեռնովիչի դուատը, որի ներկայությունն այդ օրը դարձրեց առավել հուզիչ և հիշարժան: Միջոցառմանը մասնակցեցին նաև Դիլիջանի թիվ 4 դպրոցի աշակերտները, ովքեր մեծ ջերմությամբ և պատասխանատվությամբ միացան բնության պահպանման այս կարևոր նախաձեռնությանը: Միջոցառման կազմակերպման և անցկացման գործում ակտիվ մասնակցություն ունեցան «Արգելոցապարկային համայիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները և «Սոճուտ» դենդրոպարկի անձնակազմը՝ ի հիշատակ իրենց գործընկերոց, ընկերոց և ղեկավարի: Ծառատունկն ուղեկցվեց դասական երաժշտության կենդանի կատարումներով՝ ապահովված Ստեփանավանի արվեստի դպրոցի սաների կողմից, ինչը միջոցառմանը հաղորդեց նաև մշակութային շունչ: Այս հիշարժան օրը համընկավ Կենսաբազմազանության պահպանության միջազգային օրերի շրջանակին՝ ևս մեկ անգամ ընդգծելով բնության նկատմամբ հարգանքի և պահպանման նկատմամբ մեր համատեղ հանձնառությունը:

Միջոցառման կարգախոսն էր՝ «Երբ ծառ ես տնկում, ես ժպտում եմ», որը լիովին արտահայտում էր օրվա խորհուրդը: Յուրաքանչյուր տնկված ծառ դարձավ հիշողության, երախտագիտության և շարունակության խորհրդանշի՝ ներկայացնելով մի մարդու, որի կյանքն ու գործը, ինչպես ծառի արմատները, խորապես ներդաշնակվել էին բնության հետ: Միջոցառմանը մասնակցում էին թվով 100 մասնակիցներ:



- ✓ «ՄԻՐ» հեռուստաընկերության կողմից նկարահանվել և լուսարանվել է Կազմակերպության ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Առնուլ» դենդրոպարկում փոշոտման ակտիվ շրջանը:
- ✓ Ս/թ. հունիսի 05-ին Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա շրջանակում, Բերդի «Սորաններ» դենդրոպարկում իրականացվեց բնապահպանական թեմատիկ միջոցառում, որը կազմակերպվել էր Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համայնք» ՊՈԱԿ-ի և Հայաստանի բնության պետական թանգարանի կողմից: Միջոցառման նպատակն էր խթանել հանրային մասնակցությունը բնության պահպանության գործընթացներում, խորացնել կապը շրջակա միջավայրի հետ և ստեղծել համագործակցային հարթակ՝ բնապահպանական կրթության, քննարկումների և մշակութային ներգրավվածության համար: Միջոցառմանը մասնակցեցին գործընկեր կառուցների ներկայացուցիչներ, աշակերտներ, ուսանողներ, բնապահպաններ, համայնքի ներկայացուցիչներ և այլ հետաքրքրված անձիք: Ծրագիրը ներառել է էկո-կրթական կանգառներ, կիրառական արվեստի գոտիներ, բնաճանաչողական խաղեր, թեմատիկ ելույթներ և բաց գրուցներ: Օրվա ավարտին ներկաները վայելեցին բացօթյա կինոդիտում՝ լուսանկարիչ, կենսաբան Հրաչ Ղազարյանի հեղինակային «Հայաստան, որը չենք տեսեք» բնապահպանական ֆիլմի ցուցադրությամբ: Միջոցառումը լուսաբանվել է «Տավոշ ՀՀ»-ի կողմից: Միջոցառմանը մասնակցել են թվով 150 մասնակիցներ:
- ✓ Ս/թ հունիսի 14-ին «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Միասնության կանաչ կամուրջներ» ծրագրի շրջանակում «Զրվեժ» անտառպարկում տեղի ունեցան կարևոր և բնապահպանական սեմինար-քննարկումներ՝ նախատեսված Արցախից տեղահանված երիտասարդների համար: Բացօթյա այս հանդիպումները ցուց տվեցին, որ «Զրվեժ» անտառպարկը ոչ միայն կենսաբազմազանությամբ հարուստ տարածք է, այլև հիանալի վայր՝ նման ոգեշնչող, աջակցող ու միավորող միջոցառումներ կազմակերպելու համար:

- ✓ Կազմակերպության գիտության բաժինը կազմակերպել է արտադրական պրակտիկա Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի, թվով 7 ուսանողների համար՝ «Ձրվեժ» անտառպարկում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են տարածի կենսարազմազանությանը, լանդշաֆտին և նախատեսվող բնապահպանական նախագծերին: Ներկայացվել են անտառպարկի էկոհամակարգերը, տեղական բուսական և կենդանական աշխարհը, ինչպես նաև բնության պահպանության և վերականգնման միջոցառումները: Շեշտվել է գիտական համագործակցության, մասնագիտական փորձի փոխանակման և բնապահպանական կրթության կարևորությունը:
- ✓ Կազմակերպության ենթակայությամբ գործող Ստեփանավանի «Անճու» դենդրոպարկում արտադրական պրակտիկա են ունեցել Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի թվով՝ 26 ուսանողներ:









«Էրեբունի» պետական արգելոց

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվեց, որ պահպանվել է արգելոցի տեսակային կազմը: ՀՀ կարմիր գրքում գրանցված Ցորեն բեռտական-Triticum boeoticum տեսակի առանձնյակները ցածրահասակ էին, մասսայական տարածված, իսկ Ցորեն ուրատու-Triticum urartu և Ցորեն արարատյան-Triticum araraticum տեսակները հանդես էին գալիս ցորեն բեռտականի ցանքերում առանձին կղզյակների տեսրով: Կախված լանջերի

թեքությունից վերջիններիս բարձրությունը տատանվում էր՝ 60-80 • սմ-ի սահմաններում:

«Կարմիր գրքում գրանցված Վարդատերեփուկ մուշկայինը-Amberboa moschata արգելոցի տարածքում այս տարի լայն տարածված էր, իսկ Կանգար վարդագույնը-Gundelia rosea հանդես էր գալիս մեկական առանձնյակներով:»

Թարմացվում են ուսումնասիրությունների ընթացքում հավաքված հերբարիումները:



«Որդան կարմիր» պետական արգելավայր

Կատարվել է ուսումնասիրություն «Որդան կարմիր» արգելավայրում: Արազափի տեղամասի փորձահրապարակներում միջինում հաշվառվեց 9/ինը/ քույ/ որդանախոտ: Որդանախոտը-Aeluropus հանդես էր գալիս կղզյակների տեսքով: Արազափի տեղամասում գոյացել էին ջրային կուտակումներ:

Զրառատի տեղամասում բուսականությունը փառթամ էր, փորձահրապարակներում միջինում հաշվառվեց 13/տասներեք/ քույ/ որդանախոտ: Ցուցակները կցվում են:

Կատարած ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ֆլորայի կազմը փոփոխություն չէր կրել: Հավաքվել են որոշ բուսատեսակներ հերբարիումների թարմացման նպատակով:



«Որդան կարմիր» պետական արգելավայրի ֆլորայի տաքսոնոմիական կազմ

| ՀՀ | Ընտանիք |
|---|--|
| 1.AMARANTHACEAE - ՀԱՎԱԿԱՏԱՐԱԶԳԻՆԵՐ | |
| 1. | Amaranthus albus L. – Հավակատար սպիտակ |
| 2.APIACEAE - ՀՈՎԱՆՈՑԱՎՈՐՆԵՐ | |
| 2. | Astrodaucus orientalis (L.) Drude – Աստղագազար արևելյան |
| 3. | Conium maculatum L. - Գինազողի թծավոր |
| 4. | Falcaria vulgaris Bernh. - Սիրելի սովորական |
| 3.ASTERACEAE - ԲԱՐԴԱԾԱՂԱՎՈՐՆԵՐ | |
| 5. | Achillea millefolium L.- Հազարտերևուկ սովորական |
| 6. | Acroptilon repens (L.) DC. – Դառնախոտ թունավոր |
| 7. | Arctium palliadinii (Marc.) Grossh. – Կոտոռկ անդրկովկասյան |
| 8. | Artemisia araxina – Օշինդր արաքսյան |
| 9. | Artemisia fragrans Willd – Արտեմիսյա բուրավետ |
| 10. | Artemisia sp. – Օշինդր |
| 11. | Anthemis cotula L. – Անթեմ շնային |
| 12. | Bidens tripartitus - Կատվալեզու եռաբաժան |
| 13. | Carduus nutans L. – Տատասկափոշ խոնարհված |
| 14. | Centaurea solstitialis L. – Տերփուկ արևադարձային |
| 15. | Centaurea iberica Trev. – Տերեփուկ վրացական |
| 16. | Cirsium arvense (L.) Scop. – Տատասկ դաշտային |
| 17. | Cirsium incanum (S.G.Gmel.) Hjin – Տատասկ ալեհեր |
| 18. | Cichorium intybus L. – Եղրդակ սովորական |
| 19. | Lactuca serriola Torn. – Կաթնուկ սերիոլա |
| 20. | Podospermum laciniatum (L.) DC. – Մերմնոտուկ լացինիում |
| 21. | Picris hieracioides – Դառնակախոտանման |
| 22. | Senecio racemosus – Հալսորուկ խոտանման |
| 23. | Senecio vernalis – Հալսորուկ գարնանային |
| 24. | Sonchusa aspera (L.) Hill – Կաթներեկ խորդուքորդ |
| 25. | Taraxacum officinale Wigg. – Խատուտիկ |

| | |
|---|--|
| 26. | <i>Tripleurospermum inodorum</i> (L.) Sch.Bip. - Եղակողասերմիկ անհոտ |
| 27. | <i>Xanthium italicum</i> Moretti – Դառնափուշ խտական |
| 4.BRASSICACEAE - ԽԱԶԱՇԱՂԿԱՎՈՐՆԵՐ | |
| 28. | <i>Alyssum desertorum</i> Stapf – Վառվոռուկ անապատային |
| 29. | <i>Alyssum szovitsianum</i> – Վառվոռուկ փաթաթված |
| 30. | <i>Barbarea minor</i> C. Koch – Կծմծուկ փոքր |
| 31. | <i>Bunias orientalis</i> L. – Կծուկ արևելյան |
| 32. | <i>Capsella bursa-pastoris</i> (L.) Medik. – Հովվմախաղ սելյորական |
| 33. | <i>Descuriana Sophia</i> (L.) Webb. Ex Prantl – Ավլախոտ Սոֆիայի |
| 34. | <i>Erysimum sisybrioides</i> G.A.Mey – Զագախոտ |
| 35. | <i>Hymenolobus procumbens</i> (L.) Fourr. – Բազմասերմիկ |
| 36. | <i>Lepidium ruderale</i> L. – Աղրակոտեմ |
| 37. | <i>L. vesicarium</i> L. – Կոտեմ բշտիկավոր |
| 38. | <i>L. perfoliatum</i> L. – Կոտեմ խմբուկ բանջար |
| 39. | <i>L. crassifolium</i> Waldst. Et Kit – Կոտեմ թանձրատերև |
| 40. | <i>L. latifolium</i> L. – Կոտեմ լայնտերև |
| 41. | <i>Meniocus linifolius</i> (Steph.) DC. – Լուսնավառվոռուկ կտավատատերև |
| 42. | <i>Sisymbrium altissimum</i> L. – Ավլախոտ բարձր |
| 43. | <i>S. loeselii</i> L. – Ավլախոտ լոելիի |
| 44. | <i>S. irio</i> (L.) Fourr. – Ավլախոտ խարուսիկ |
| 5.BORAGINACEAE - ԳԱՂՏՐԻԿԱԶԳԻՆԵՐ | |
| 45. | <i>Arnebia decumbens</i> (Vent.) Coss.et Kral.- Գառնակեցիկ փուլած |
| 46. | <i>Luppula sessiliflora</i> (Boiss.) Guerke – Կպչուկ մորուքավոր |
| 47. | <i>Myosotis micrantha</i> Pall. Ex Lehm. – Անմոռուկ մանրածաղիկ |
| 6.CHENOPodiACEAE - ԹԵԼՈՒԿԱԶԳԻՆԵՐ | |
| 48. | <i>Atriplex verrucifera</i> Bied. – Թալլ մորուքավոր |
| 49. | <i>A. leucoclada</i> Boiss. subsp <i>turcomanica</i> (Moq.) Aellen – Թալլ թուրքմենական |
| 50. | <i>A. tatarica</i> L. - Թալլ թաթարական |
| 51. | <i>Bassia hyssopifolia</i> (Pall.) O. Kuntze - Kochia- Ավլաբույս |

| | |
|-----|--|
| 52. | Bienertia cycloptera Bunge - Բիեներիցիա շուրջաթև |
| 53. | Camphorosma lessingii Litv. – Քաֆորախոտ Լեսինգի |
| 54. | Chenopodium chenopodioides (L.) Aellen – Շելուկ հաստատերն |
| 55. | Halanthium rarfolium C. Koch – Աղածաղիկ նոսրածաղիկ |
| 56. | Halostachys caspica (Bied.) C. A. Mey – Աղահասկիկ կասպիական |
| 57. | Halocnemum strobilaceum (Pall.) Bied. – Սարսազմ կոնածն |
| 58. | Kalidium caspicum (L.) Ung. Sternd – Կալախոտ կասպիական |
| 59. | Kochia prostrata – Ավլարոց գետնատարած |
| 60. | Kochia scoparia – Ավլարոց սովորական |
| 61. | Noaea minuta – Նոյա մանր |
| 62. | Noaea mucronata – Նոյա սուր փշոտ |
| 63. | Petrosimonia brachiata (Pall.) Bunge – Պետրոսիմոնիա կարճատերն |
| 64. | P. glaucescens (Bunge) Iljin - Պետրոսիմոնիա կապտավուն |
| 65. | P. glauca (Pall.) Bunge. - Պետրոսիմոնիա մոխրագույն |
| 66. | Polycnemum arvense L. – Բազմոտնուկ դաշտային |
| 67. | Suaeda alrissima (L.) Pall. - Սվերդա բարձր |
| 68. | S. heterophylla (Kar. Et Kir.) Bunge - Սվերդ խայտարդես |
| 69. | S. sp. |
| 70. | Salsola ericodes Bieb. – Օշան էրիկոդես |
| 71. | S. dendroides Pall. – Օշան ծառանման |
| 72. | S. nitraria Pall. – Օշան նատրոնային |
| 73. | S. soda L. – Օշան սոդակիր |
| 74. | S. macra Litv. – Օշան մացերա |
| 75. | S. glauca Bied. – Օշան մոխրագույն |
| 76. | Salicornia Europa ea L. – Բալախ եվրոպական |

7.CONVOLVULACEAE - ՊԱՏԱՏՈՒԿԱԶԳԻՆԵՐ

| | |
|-----|--|
| 77. | Convolvulus arvensis L. - Պատատուկ դաշտայախին |
| 78. | Calystegia sepium – Տիպատատառկ ցանկապատային |

8.CUSCUTACEAE - ԳԱՂԱՍԶԳԻՆԵՐ

| | |
|--|---|
| 79. | Cuscuta cesatiana Bertol. - Գաղճ ցեզասի |
| 9.EUPHORBIACEAE - ԻՇԱԿԱՁՆՈՒԿԱԶԳԻՆԵՐ | |
| 80. | Euphorbia sequierana Neck. - Իշակաթնուկ սեգիերի |
| 81. | E. viragata Waldst. Et Kit. - Իշակաթնուկ ծողանման |
| 10.FABACEAE - ԼՈՐԱԶԳԻՆԵՐ | |
| 82. | Alhagi pseudoalhagi (Bieb.) Desv. - Ոխտափուշ սովորական |
| 83. | Goebelia alopecuroides (L.) Bunge - Դառնարմատ աղվեսապոչավոր |
| 84. | Glycyrrhiza glabra - Մատուտակ մերկ |
| 85. | Lotus caucasicus Kuprinan ex. Juz - Եղբառվոյտ կովկասյան |
| 86. | Melilotus officinalis Desr. - Իշառվոյտ դեղատու |
| 87. | Medicago lupulina L. - Ալվոյտ գայլուկանման |
| 88. | Trifolium arvense L. - Երեքնուկ դաշտային |
| 89. | T. repens L. - Երեքնուկ գետնատարած |
| 90. | Ononis arvensis - Եզնարգել դաշտային |
| 11.LAMIACEAE - ՇՐԹՆԱԾԱՂԿԱՎՈՐՆԵՐ | |
| 91. | Leonurus cardiaca L. - Այոնիծագի սովորական |
| 92. | Mentha longifolia (L.) L. - Դաղճ երկարատերև |
| 93. | Stachys atherocalyx C. Koch. - Արեղախոտ սևաբաժակ |
| 94. | Lamium amplexicaule L. - Խովեղինջ ցողունագիրկ |
| 95. | Lamium album - Խովեղինջ սպիտակ |
| 96. | Teucrium orientale - Լերդախոտ արևելյան |
| 12.LINACEAE- ԿՏԱՎԱՏԱԶԳԻՆԵՐ | |
| 97. | Linum usitatissimum - Կտավատ սովորական |
| 13.ZYGOPHYLLACEAE - ԶՈՒԳԱՏԵՐԵՎԱԶԳԻՆԵՐ | |
| 98. | Nitraria schoberi L. - Բորակաթուփ Շոբերի |
| 14.OROBANACHACEAE - ՃՐԱԳԱԽԱՌԱԶԳԻՆԵՐ | |
| 99. | Orobanache sp. - Ճրագախոտ |
| 100. | Cistanche salsa (C.A.Mey) G.Bacch - Դիվագի աղուտային |
| 15.ONAGRACEAE - ԱՊՈՒԶԱՆԱԶԳԻՆԵՐ | |
| 101. | Epilobium hirsutum - Ապուզան թավոտ |
| 16.PAPAVERACEAE - ԿԱԿԱՁԱԶԳԻՆԵՐ | |
| 102. | Papaver arenarium Bied. - Կակաչ ավազատեր |

17.PLANTAGINACEAE - ԶՂԱԽՈՏԱԶԳԻՆԵՐ

| | |
|------|---|
| 103. | Plantago lanceolata L. – Եզանկեզու նշտարատերև |
|------|---|

18.POLYGONACEAE - ՄԱՏԻՏԵՂԱԶԳԻՆԵՐ

| | |
|------|---|
| 104. | Polygonum aviculare L. – Մատիտեղ թթչոց (ճնճղպաշար) |
| 105. | P. convolvulus - Մատիտեղ փաթաթվոց |
| 106. | P. hydropiper ♂ – Մատիտեղ ջրային |
| 107. | Rumex acetosa L. – Ավելուկ սովորական |
| 108. | R. crispus L. - Ավելուկ գանգուր |

19.POACEAE - ՀԱՑԱԶԳԻՆԵՐ

| | |
|------|--|
| 109. | Aelorropus littoralis (Gouan) Parl.- Որդանախոտ աղասեր |
| 110. | Alopecurus armenus (C.Koch) Grossh. – Աղվեսազի հայկական |
| 111. | Anisantha = Bromus danthoniae - Ցորնուկ Դանթոնի |
| 112. | Apera intermedia Hack. - Հողմախոտ միջանկյալ |
| 113. | Avena sterilis – Վարսակ անպտուղ |
| 114. | Agrostis stolonifera – Ագրոխոտուկ սպիտակ |
| 115. | Agrostis tenuis – Ագրոխոտուկ մազանման |
| 116. | Bromus japonicus Thunb.- Ցորնուկ ճապոնական |
| 117. | Calamagrostis pseudophragmites – Եղեգնախոտ (Կեղծեղեղ) |
| 118. | Cynodon dactylon – Արվանդակ շնատամ |
| 119. | Dactylis glomerata – Ոզնախոտ հավաքված |
| 120. | Eremopyrum triticeum (Gaertn.) Navski – Անապատասեղ ցորենանման |
| 121. | Phragmites australis (Cav.) Trin. ex Steud. – Եղեղ սովորական |
| 122. | Poa bulbosa L. – Դաշտավլուկ սխուկավոր |
| 123. | Puccinellia gigantea (Grossh.) Grossh. – Անվողնուցուկ խոշոր |
| 124. | Puccinellia grossheimiana V. Krecz. – Անվողնուցուկ Գրոհեյմի |

20.RUBIACEAE - ՏՈՐՈՆԱԶԳԻՆԵՐ

| | |
|------|---------------------------------------|
| 125. | Galium aparine L. – Մակարդախոտ կպչուն |
|------|---------------------------------------|

21.TAMARICACEAE - ԿԱՐՄՐԱՆԱԶԳԻՆԵՐ

| | |
|------|---|
| 126. | Tamarix ramosissima Ledeb. – Կարմարան ճյուղատ կամ բազմաճյուղ |
|------|---|

| | |
|--|---|
| 127. | T. occidentalis Bunge – Կարմրան ութառեց |
| 22.TYRPHACEAE - ԿԵՐՈՆԱԶԳԻՆԵՐ | |
| 128. | Typha angustifolia L. – Կերոն նեղատերև |
| 23.ULMUS - ԹԵՂԱԶԳԻՆԵՐ | |
| 129. | Ulmus parvifolia-Թեղի մանրատերև |
| 24.ZYGOPHYLLACEAE - ԶՈՒԳԱՏԵՐԵՎԱԶԳԻՆԵՐ | |
| 130. | Tribulus terrestris L. – Տատաշ զետնատարած |
| 25.ROSACEAE - ՎԱՐԴԱԶԳԻՆԵՐ | |
| 131. | Filipendula vulgaris – Փրփրուկ սովորական |
| 132. | Geum sp - Մարեմխոտ |

«Որդան կարմիր» պետական արգելավայր

| C/C | Ընտանիք, Ծառատեսակներ |
|-----------------------------|-----------------------|
| Tamaricaceae-Կարմրանազգիներ | |
| 1. | Կարմրան բազմաճյուղ |
| 2. | Կարմրան ութառեց |
| Ulmaceae - Թեղազգիներ | |
| 3. | Թեղի մանրատերև |

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր

Շարունակվում են արգելավայրի ֆլորայի տեսակային կազմի ճշտումները՝ նախորդ տարում հավաքված նյութերի հիման վրա: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմվել են ցուցակներ՝ անոթավոր բույսերի և ծառաթփատեսակների:

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր

Իրականացվում է նախորդ տարիների հավաքված նյութերի հավաքագրում: Ճշտվել են արգելավայրում աճող անոթավոր բույսերի և ծառաթփատեսակների կազմը:

«Զիկատար» պետական արգելավայր

Կիրականացվեն ուսումնասիրություններ Բոխու-Carpinus և Հաճարենու-Fagus սերմնային վերականգնման ուղղությամբ:

Կատարվել են աշխատանքներ տնկարունում, դրվել են Գիհու- Juniperus կտրոններ, տնկվել են Տանձենու-Pyrus, Բարդու-Populus, Զիակասկի-Aesculus տնկիներ:

Մաքրվել է պտղատու այգու տարածքը, էտվել են ծառերը:

Մտեմանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Դենդրոպարկի ծառաթփատեսակների տեսակային կազմը փոփոխություն չի կրել: Դենդրոպարկը խնամված է, ավելի վաղ մեր բաժանմունքի աշխատակիցների կողմից դենդրոպարկ է տեղափոխվել Նարդոսի-Lavandula, Սանտոլինի-Santolina և Հեյխերայի-Heuchera թփեր: Ցանվել են Գետնանոճու-Chamaecyparis սերմեր վերջիններս ծլել են:

Դենդրոպարկում տնկվել են Մայրու-Cedrus տնկիներ:

Վնասատուների դեմ կատարվել է քիմիական պայքարի աշխատանքներ: Հնձվել է խոտը:

Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ

Դենդրոպարկի տարածքը մաքուր էր և խնամված, ծառաթփատեսկների տեսակային կազմը պահպանված էր:

Դենդրոպարկ էր ներմուծվել և տրվել ծաղկային լուծումներ հետևյալ տեսակներով՝ Մատնունի-Potentilla, Շանկիտ-Ajuga, Նարդոս- Lavandula և շտամպ վարդի թփեր:

Գիտարշավի ընթացքում Սոճու-Pinus ծառուղում գրանցվեց մեկ թերված սոճի և մեկ սոճի որի գագաթը կոտրվել էր:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկ

Տարվում են աշխատանքներ դենդրոպարկի տեսակային կազմի ճշտման ուղղությամբ: Նախորդ տարում արձանագրվել էր, որ Բուղթյա Դավիդի-Buddleia davidi-ի տեսակը չորացել է, Կազմակերպության ենթակայությամբ գործող «Զրվեժ» անտառոպարկի տնկարանից դենդրոպարկ է տեղափոխվել և տնկվել վերը նշած թփատեսակը: Դենդրոպարկ են տեղափոխվել Մոխրածաղիկ-Cineraria, Հեյխերա-Heuchera, Սանթոլին- Santolina, Կուսածաղիկ-Vinca, Իլենի-Euonymus վերջինիս գեղազարդ տեսքը ապահովվելու համար: Տոսախ- Buxus թփատեսակով ստեղծվել է կենդանի ցանկապատ:

Դենդրոպարկում տարվում են խնամքի և տարածքի մաքրման աշխատանքներ:

Ձեռքի սրսկիչով կատարվել է քիմական պայքարի աշխատանքներ: Հնձվել և հավաքվել է խոտը: Դրվել են Տոսախ- Buxus կտրոններ:

Իջևանի «Դենդրոպարկ»

Կատարվել է ուսումնասիրություն Իջևանի «Դենդրոպարկ»-ի վարձակալված տարածքում:

«Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ի կողմից վարձակալված տարածքում արձակագրվեց ընկած ծառեր, որոնք համարակալվել և արձանագրվել էին որպես

չորացած ծառեր վերջին գարնանային ստուգումների ժամանակ: Տարածքում չեն տարվել խնամքի աշխատանքներ, խոտը հնձված չէր:

«Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲԸ-ի վարձակալած տարածքում ևս արձանագրվեց ընկած ծառեր: Տարածքի խոտը հնձված չէր: Շառաթփատեսակների տեսակային կազմը պահպանված է:

Հավաքված հերբարումների հիման վրա ճշտվում են դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները:

«Զրվեժ» անտառպարկ

Անտառպարկի տարածքում տարվում են աշխատանքներ տեսակային կազմի պահպանման և հարստացման ուղղությամբ: Անտառպարկի տեսակային կազմի հարստացման նպատակով 2024 թվականին ներմուծված նոր՝ Սոճազգիների *Pinaceae* ընտանիքին պատկանող *Մայրի առլայան-Cedrus atlantica*, Սոճի Արմանդի-*Pinus Armandii* և Վարդազգիների *Rosaceae* ընտանիքի Կերիա ճապոնական-*Kerria japonica* (L.) D ծառաթփատեսակների մոտ նկատվել է աճի դրական դինամիկա:

Ցանկած Սոճի Արմանդիի – *Pinus Armandii* և Սոճի Էլդարյանի - *Pinus eldarica* MedW. սերմերեր ծելել են:

Սերվոյայի – *Sequoia* սերմնաբուսակները գտնվում են լավ վիճակում:

Կազմակերպության Գիտության և Էկոտուրիզմի զարգացման բաժանմունքի աշխատակիցների և Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջատարանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի մասնագետների համագործակցության շրջանակում «Զրվեժ» անտառպարկում իրականացվել են հիվանդությունների և վնասատուների հայտնաբերման ու ուսումնահրության աշխատանքներ: Վերցվել են փորձանմուշներ լաբորատոր պայմաններում ստուգելու համար: «Զրվեժ» անտառպարկում տեղադրվել է միջատարանական որսաթակարություն:

Անտառպարկի տարածքում որոշ մշտադաշտ և տերեւաթափ տեսակներ պայմանավորված ջրի պակասով ճնշված են, մի քանի ծառեր չորացել են:

Գարնանը անտառպարկում տնկվել են Օճառածաղի-*Sapindus*, Բարդու-*Populus*, Գիհու-*Juniperus*, Բաղրջուկի (հիբիսկուսի)-*Hibiscus* տնկիներ:

Հիվանդություններով և վնասատուներով վարակված օջախներում կառարվել են բիմիական պայքարի աշխատանքներ: Հնձվել է ճանապարհամերձ հատվածների խոտը: Մասնակի վերանորոգվել է ոռոգնման ջրագծերը, հունիսին անտառպարկի տարածքը ոռոգվել է:



Սոճի Արմանդի - *Pinus Armandii*

Սոճի Էլդարյան - *Pinus eldarica*



Սերվոյա - *Sequoia*

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի
տնօրենի Ժ/Ա

Արտեն Միրզոյան

Կատ.

Գիտության և էկուուրբիզմի զարգացման բաժանմունքի պետ՝ Հայարքի Գրիգորյան

Գիտական աշխատող՝ Անեա Վարդանյան

Եկոտուրիզմի մասնագետ - գիտական աշխատող՝ Անեա Վարդավան